ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/13

ք. Երևան

«01» «04» 2026թ.

ՀՀ Վիճակագրական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջակո Ավտոդետ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Դ. Պողոսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնացուցակի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնացուցակի չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնացուցակի համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ Ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված Ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 120000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է Պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների վերանորոգման Ծառայությունների դեպքում, մատուցված Ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն Պայմանագրով սահմանված առանձին տեսակի Ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված Ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված Ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնացուցակին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար Ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող **կամ Պատվիրատու**) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած **վնասն են:**

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի Պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման Պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) Պայմանագրի (այսուհետ՝ Ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ Պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի Պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (Հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն Պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն Պայմանագիրը կազմված է **18** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Վիճակագրական կոմիտե	«Ջակո Ավտոդետ» ՍՊԸ
Կառավարական տուն 3	ՀՀ, ք. Երևան 0035, Ռուբինյանց փ. 22 շ., 35 շին.
ՀՎՀՀ 02507509	ՀՎՀՀ 00449313
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011011021	Հ/Հ 2050822028341001
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
Ա. Հայրապետյան----------(ստորագրություն)	Դ. Պողոսյան----------(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«04» «04» 2026թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/13
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ

ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆԱՑՈՒՑԱԿ

առանձին տեսակի ծառայության մատուցման համար ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ բանաձևով հաշվարկված միավորի գների

ՀՀ դրամ

Հ/հ	ավտոմեքենաների պահպանման ծառայություններ, այդ թվում	Չ/մ	Հյունդայի էլանտրա /2012 թ. 1.6 լիտր/
	1.Ավտոմեքենայի ստուգման ծառայություններ		
1	Համակարգչային ախտորոշում	հատ	5000
2	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	հատ	3000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
3	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	հատ	500
4	Օդի զտիչի փոխարինում	հատ	500
5	Օդորակիչի զտիչի փոխարինում	հատ	500
6	Վառելիքի զտիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25000
7	Բենզամղիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25000
8	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	20000
9	Ակսելերատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	20000
10	Ակսելերատորի մաքրում	հատ	5000

	3. Սառեցման և արտածման համակարգ		
11	Փոկի հանում և տեղադրում	հատ	5000
12	Հովհարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10000
13	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	15000
14	Ռադիատորի վերանորոգում	հատ	35000
15	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	15000
16	Թերմոստատի փոխարինում	հատ	15000
17	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	5000
18	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10000
19	Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում	հատ	6000
20	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	1000
21	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	հատ	20000
	4. Կախոց		
22	Տրավերսի հանում և տեղադրում	հատ	20000
23	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10000
24	Փոխանցման տուփի բարձիկի փոխարինում	հատ	7000
25	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	հատ	10000
26	Անվակունդի հանում և տեղադրում	հատ	10000
27	Անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	10000
28	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	հատ	10000
29	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	հատ	7000
30	Զսպանակի հանում և տեղադրում	հատ	10000
31	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	7000
32	Ներքևի լծակի հանում և տեղադրում	հատ	10000

33	Ներքևի լծակի վռանների փոխարինում	հատ	5000
34	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	հատ	5000
35	Գնդե հոդակապերի փոխարինում	հատ	5000
36	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոցի փոխարինում	հատ	5000
37	Ծայրակալերի հանում և տեղադրում	հատ	5000
38	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	5000
39	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	5000
40	Հետևի զսպանակի փոխարինում	հատ	10000
41	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000
42	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) հանում և տեղադրում	հատ	6000
43	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) վռանի փոխարինում	հատ	5000
44	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	հատ	150000
45	Փոխանցման տուփի հանում և տեղադրում	հատ	6000
46	Անվաբացքի կարգավորում		
	5. Ղեկային մեխանիզմ		
47	Ղեկային կալունի հանում և տեղադրում	հատ	30000
48	Ղեկային կալունի վերանորոգում	հատ	75000
49	Ղեկային ձողի հանում և տեղադրում	հատ	10000
50	Ղեկային ձողի նորոգում	հատ	55000
51	Ղեկային ժապավենի փոխարինում	հատ	15000
52	Հիդրոուժեղարարի յուղի փոխարինում	հատ	3000
	6. Արգելակային համակարգ		
53	Գլխ. գլանի հանում և տեղադրում	հատ	15000
54	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	հատ	15000

55	Արգելակային համակարգի օդահանում	հատ	5000
56	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	10000
57	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	10000
58	Առջևի սուպպորտի վերանորոգում	հատ	15000
59	Հետևի սուպպորտի վերանորոգում	հատ	15000
60	Արգելակային փողրակի փոխարինում	հատ	6000
61	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	5000
62	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	5000
63	Առջևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	7500
64	Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	7500
65	Արգելակային սկավառակի հղկում	հատ	7500
66	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5000
67	Ձեռքի արգելակի կարգավորում	հատ	5000
	7. Էլեկտրասարքավորում		
68	Էլեկտրասարքավորման վերանորոգում	ժամ	15000
69	Լամպի փոխարինում	հատ	5000
70	Էլեկտրական տվիչների փոխարինում	հատ	5000
71	Էլեկտրական անջատիչների փոխարինում	հատ	5000
72	Ապակեամբարձիչի հանում և տեղադրում	հատ	20000
73	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	հատ	20000
74	Գեներատորի հանում և տեղադրում	հատ	35000
75	Գեներատորի նորոգում	հատ	45000
76	Մեկնարկիչի հանում և տեղադրում	հատ	20000
77	Մեկնարկիչի նորոգում	հատ	45000
78	Լապտերների կարգավորում	հատ	20000

79	Վառոցքի կոճի փոխարինում	հատ	8000
80	Վառոցքի մոմերի փոխարինում	հատ	4000
81	Ապակելվացիչի պոմպի փոխարինում	հատ	15000
82	Ապակելվացիչի փոխարինում	հատ	15000
83	Կոնդիցիոների լիցքավորում	հատ	20000
84	Ապահովիչի փոխարինում	հատ	200
85	Մարտկոցի փոխարինում	հատ	1000
	8. Այլ ծառայություններ		
86	Անիվի հանում և տեղադրում	հատ	2000
87	Անվադողի քանդում և հավաքում	հատ	2000
88	Անիվի հավասարակշռում	հատ	2000
89	CO-զոդման աշխատանքներ	սմ	5000
90	Խառատային աշխատանքներ	կտոր	5000
91	Փականագործի աշխատանքներ	ժամ	5000
92	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 կտորի համար	հատ	55000
	Պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
	1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
1	Յուղ շարժիչի սինթետիկ 5W30	լիտր	6000
2	Յուղի զտիչ	հատ	3000
3	Յուղի փողրակ	հատ	6000
4	Վառելանյութի մղիչ էլեկտրական	հատ	30000
5	Վառելանյութի փողրակ	հատ	6000
6	Օդի զտիչ	հատ	4000
7	Վառելիքի զտիչ	հատ	30000
8	Օդորակիչի զտիչ	հատ	4000
9	Ջերմաստիճանային տվիչ	հատ	15000
10	Յուղի տվիչ	հատ	10000
11	Բաշխիչ լիսեռի տվիչ	հատ	25000

12	Ծնկաձև լիսեռի տվիչ	հատ	25000
13	Մաքրող հեղուկ ABRO	հատ	3000
14	Օդի ծախսի տվիչ	հատ	10000
	2. Սառեցման և արտածման համակարգ		
15	Հովհար	հատ	48000
16	Ռադիատոր	հատ	72000
17	Ընդարձակող բաք	հատ	17000
18	Ընդարձակող բաքի փական	հատ	3000
19	Հովացման համակարգի փողրակ	հատ	4000
20	Թերմոստատ	հատ	12000
21	Սառեցման հեղուկ	լիտր	3000
22	Հոլովակ	հատ	44000
23	Փոկ	հատ	11000
24	Խլարարի ներդիր	հատ	7000
25	Խլարարի կախոց	հատ	4000
26	Կրոնշտեյն	հատ	4000
27	Անուր (Խամուտ)	հատ	1500
28	Վառարանի ռադիատոր	հատ	38000
29	Վառարանի շարժիչ	հատ	35000
30	ԱՓՏ-ի զտիչ	հատ	25000
31	Տրանսմիսսիոն յուղ	լիտր	6000
32	ԱՓՏ յուղ	լիտր	6500
33	Հերմետիկ	հատ	3000
34	Հակասառիչ հեղուկ (անտիֆրիզ)	լիտր	3500
	3. Կախոց		
35	Շարժիչի բարձիկ	հատ	78000
36	Փոխանցման տուփի բարձիկ	հատ	65000
37	Ձախ կամ աջ հոդակապ	հատ	58000
38	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	հատ	5000

39	Անվակունդ	հատ	35000
40	Անվակունդի առանցքակալ	հատ	16000
41	Անվակունդի խցուկ	հատ	16000
42	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	հատ	4000
43	Հարվածամեղմիչի թասակ	հատ	18000
44	Առջևի ցնցամեղմիչ	հատ	68000
45	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	հատ	5000
46	Ներքևի լծակ	հատ	48000
47	Ներքևի լծակի վռան	հատ	7000
48	Գնդե հոդակապ	հատ	14000
49	Առջևի կայունարարի վռան	հատ	5000
50	Հետևի կայունարարի վռան	հատ	5000
51	Կայունարարի կանգնակ	հատ	9500
52	Հետևի ցնցամեղմիչ	հատ	68000
53	Աջ կամ ձախ ձգան	հատ	11000
54	Ծայրակալ	հատ	10000
55	Քսայուղ լիտոլ	հատ	3000
	4. Ղեկային մեխանիզմ		
56	Ղեկային կալունի խաչուկ	հատ	4000
57	Հիդրոուժեղարարի փողրակ	հատ	4000
58	Ղեկային ժապավեն	հատ	22000
59	Հիդրոուժեղարարի յուղ	լիտր	4000
	5. Արգելակային համակարգ		
60	Գլխ. գլան	հատ	40000
61	Վակուումային ուժեղարար	հատ	40000
62	Արգելակային փողրակ	հատ	4000
63	Սուպորտի ուղղորդիչ	հատ	4000
64	Սուպորտի մանժետ	հատ	4000

65	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	25000
66	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	20000
67	Առջևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	27000
68	Հետևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	25000
69	Ձեռքի արգելակի ճոպան	հատ	24000
70	ABS-ի տվիչ	հատ	19000
71	Արգելակային հեղուկ՝ DOT-3	գրամ	4000
	6. Էլեկտրասարքավորում		
72	Լամպ	հատ	5500
73	Թարթիչի լապտերի լամպ	հատ	5500
74	Հակամշուշային լապտերի լամպ	հատ	5500
75	Դիմահար լամպ	հատ	9000
76	Հեռահար լամպ	հատ	11000
77	Գեներատորի դիոդային կամրջակ	հատ	16000
78	Գեներատորի ռելե	հատ	8000
79	Գեներատորի առանցքակալ	հատ	8000
80	Գեներատորի խարիսխ	հատ	12000
81	Մեկնարկիչի ռելե	հատ	8000
82	Մեկնարկիչի ածուխ	հատ	7000
83	Մեկնարկիչի ավտոմատ	հատ	14000
84	Մեկնարկիչի բենդեքս	հատ	12000
85	Վառոցքի կոճ	հատ	25000
86	Վառոցքի մոմ	հատ	6000
87	Ապակելվացիչ	հատ	17000
88	Ապակելվացիչի պոմպ	հատ	20000
89	Ապակելվացիչի հեղուկի տարա	հատ	20000

90	Ապահովիչ	հատ	2000
91	Ապակեմաքրիչի շարժիչ	հատ	20000
92	Մարտկոց	հատ	58000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011021
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ջակո Ավտոդետ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0035, Ռուբինյանց փ. 22 շ., 35 շին.
ՀՎՀՀ 00449313
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050822028341001
Տնօրեն՝
Դ. Պողոսյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 01 » «04» 2026թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/13
ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ. դրամ

N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	Ծառայության** I եռ. քանակը	I եռ. գինը /հազ. ՀՀ դրամ/	II եռ. քանակը	II եռ. գինը /հազ. ՀՀ դրամ/	III եռ. քանակը	III եռ. գինը /հազ. ՀՀ դրամ/	IV եռ. /մինչև դեկտեմբերի 21-ը/ քանակը	IV եռ. գինը /հազ. ՀՀ դրամ/	Ընդամենը քանակը	Ընդամենը գինը /հազ. ՀՀ դրամ/
1	50111130/1	Հյունդայի Էլանտրա պ/հ 122SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ			1	54.0	1	84.0	1	120.0	1	120.0

*գնման ժամանակացույցը ներկայացված է աճողական կարգով
** ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտադիր պայման է հանդիսանում Պատվիրատուի կողմից Կատարողին գրության փրամադրումը:
Պատվիրատուի կողմից գրության չտրամադրման դեպքում Ծառայության մատուցման անհրաժեշտությունը բացակայում է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011021
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ջակո Ավտոդետ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0035, Ռուբինյանց փ. 22 շ., 35 շին.
ՀՎՀՀ 00449313
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050822028341001
Տնօրեն՝
Դ. Պողոսյան ----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«01» «04» 2026թ. կնքված N ՀՀ ԿԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/13
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/1	Հյունդայի Էլանտրա պ/հ 122SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն				54.0	54.0	54.0	84.0	84.0	84.0	120.0	120.0	120.0	120.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011021
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ջակո Ավտոդետ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0035, Ռուբինյանց փ. 22 շ., 35 շին.
ՀՎՀՀ 00449313
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050822028341001
Տնօրեն՝
Դ. Պողոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 4
« 01 » «04» 2026թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/13
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված N 4.1
« 01 » «04» 2026թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/13
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 5
« 01 » «04» 2026թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/13
ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ.
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

միջև «--» 20 թ. կնքված ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
կատարողի անվանումը

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«--» 20 թ.